

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԴՈՒ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ

տ Ե Ղ Ե Կ ա գ ի ր N 27

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ 2008Թ.-Ի ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԸ

ՀՀ նախարարների եկամուտները.....5

Նախարարների անցած կիլոմետրերը7

Մարզպետական եկամուտներ9

ՏԱ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԻԱԿ-ն ընդդեմ «Հայ ազգային կոնգրես» դաշինքի.....10

ԻԱԿ-ն ընդդեմ «Օրինաց երկիր» կուսակցության11

ԻԱԿ-ն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության
ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի.....12

ՏԱ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվության ազատության օրենսդրության
բարեփոխումների փաթեթ.....13

Բարեփոխումների հիմնավորում19

ՍԵՎ ՑՈՒՑԱԿ 2009..22

Ծրագրի ղեկավար՝ Շուշան Դոյրոյան



«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը հրապարակվում է ՀնՖորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Հոդվածներում արտահայտված տեսակետները հեղինակային են եւ չեն արտահայտում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:

ՀՀ նախարարների եկամուտները

Գեւորգ Չայրապետյան

2009թ.-ի հոկտեմբերին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացավ ՀՀ բոլոր նախարարների 2008թ.-ի գույքի եւ եկամուտների հայտարարագրերում ներառված տվյալների մասին տեղեկանքները: Չտրամադրվեցին միայն Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Գեւորգ Պետրոսյանի տվյալները, քանի որ նա նախարարի պաշտոնը զբաղեցնում է 2009թ.-ի մայիսի 12-ից: Գյուղատնտեսության նախարար Գերասիմ Ալավերդյանը եւ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը 2008թ.-ի ընթացքում զբաղեցրել են այլ պաշտոններ եւ գույքի եւ եկամուտների հայտարարագրեր, բնականաբար, ներկայացրել են այլ պաշտոններ զբաղեցնելու ժամանակ ստացած եկամուտների վերաբերյալ: Գյուղատնտեսության նախարար Գերասիմ Ալավերդյանը աշխատել է ՀՀ վերահսկիչ պալատում՝ որպես պետական բյուջեի վերահսկողության վարչության պետ, իսկ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը եղել է ՀՀ ԱԺ պատգամավոր, հանձնաժողովի նախագահ:

Այսպես, ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկանքների վերլուծությունը ցույց տվեց, որ այս ժամանակահատվածում գույքի եւ եկամուտների հայտարարագիր ներկայացրած 17 նախարարներից միայն 4-ն են 2008թ.-ի ընթացքում օտարել կամ ձեռք բերել որեւէ շարժական կամ անշարժ գույք: Այսպես, Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը 2008թ.-ին օտարել է «Շելրոլե» մակնիշի ավտոմեքենա, փոխարենը ոչինչ ձեռք չի բերել: Տրանսպորտի եւ կապի նախարար Գուրգեն Սարգսյանը օտարել է շենք եւ շինություն, 2 հողամաս՝ փոխարենը ձեռք բերելով շենք եւ շինություն եւ 1 հողամաս: Առանց որեւէ բան օտարելու նոր գույք ձեռք են բերել նախարարներից երկուսը՝ Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արմեն Գրիգորյանը եւ Քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանը՝ զնելով մեկական հողամասեր:

2008թ.-ին գույքով եկամուտ ունեցել է միայն Տրանսպորտի եւ կապի նախարար Գուրգեն Սարգսյանը՝ 18.400.000 ՀՀ դրամ արժողությամբ:

2008թ.-ի ընթացքում արտարժույթով եկա-

մուտ ունեցել են Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը՝ 13.173 եվրո, եւ Գյուղատնտեսության նախարար Գերասիմ Ալավերդյանը՝ 10.000 ԱՄՆ դոլար:

2008թ.-ին ամենաշատ եկամուտն ունեցել է Առողջապահության նախարար Չարուքուն Քուշկյանը: Նրա եկամուտը կազմել է 381.607.396 դրամ՝ ավելի քան 131 անգամ ավելի ամենաքիչ եկամուտ ստացած Սշակույթի նախարար Չասմիկ Պողոսյանը (2.903.800 դրամ) եւ 10 անգամ ավելի եկամուտների ծավալով երկրորդ տեղում գտնվող Տրանսպորտի եւ կապի նախարար Գուրգեն Սարգսյանի ցուցանիշից (30.865.620 դրամ՝ ներառյալ գույքով ստացված եկամուտը):

Առողջապահության նախարար Չարուքուն Քուշկյանին հաջորդում են Տրանսպորտի եւ կապի նախարար Գուրգեն Սարգսյանը եւ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը՝ համապատասխանաբար 30.865.620 դրամ եւ 18.823.430 դրամ եկամուտներով:

Ինչպես արդեն նշվեց, 2008թ.-ին ամենաքիչ եկամուտն ունեցել է Սշակույթի նախարար Չասմիկ Պողոսյանը՝ 2.903.800 դրամ: Նրան

հաջորդում են Բնապահպանության նախարար Արամ Չարությունյանը եւ Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արմեն Գրիգորյանը՝ համապատասխանաբար 2.906.178 դրամ եւ 3.131.900 դրամ եկամուտներով:

Մնացած նախարարների՝ 2008թ.-ին ստացած եկամուտների չափերը տատանվում են 3-12մլն դրամի սահմաններում: Անճշտությունից խուսափելու համար այստեղ հաշվի չեն առնված Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի եւ Գյուղատնտեսության նախարար Գերասիմ Ալավերդյանի եկամուտները, քանի որ նրանց եկամուտները բաղկացած են նաեւ արտարժույթով ստացված միջոցներից: Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի եկամուտը կազմել է 2.840.049 դրամ, 13.173եվրո, իսկ Գյուղատնտեսության նախարար Գերասիմ Ալավերդյանինը՝ 9.722.600դրամ, 10.000ԱՄՆ դոլար:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում պաշտոնյաներն այլեւս չեն ներկայացնում փոխկապակցված անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրեր: Այսինքն, հասարակությունն այլեւս չի կարող իմանալ նրանց կանանց, երեխաների եւ այլ փոխկապակցված անձանց գույքի եւ եկամուտների մասին տեղեկություններ: Ամեն դեպքում, տեղեկանքների հրապարակային լինելը ավելի թափանցիկ է դարձնում մեր նախարարների աշխատանքը, նրանց եկամուտների հրապարակայնությունը ավելացնում է նրանց գործունեության նկատմամբ վստահությունը:

Տեղեկանքները հրապարակված են նաեւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ինտերնետային կայքում՝

[http://www.foi.am/am/content/101/:](http://www.foi.am/am/content/101/)

Նախարարների անցած կիլոմետրերը

Գելորգ Չայրապետյան

2009թ.-ի հոկտեմբերի 1-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվություն ստանալու հարցումներով դիմեց ՀՀ բոլոր նախարարներին՝ խնդրելով տեղեկացնել, թե 2009թ.-ի օգոստոսին որքան վառելիք է ծախսել եւ քանի կիլոմետր վազք է գրանցել նախարարներից յուրաքանչյուրի ծառայողական ավտոմեքենան:

Այս նախաձեռնությունը հնարավորություն տվեց ոչ միայն հանրության համար ավելի թափանցիկ դարձնել մեր նախարարների աշխատանքը, այլ նաեւ ցույց տվեց, թե որ նախարարություններն են ավելի լավ կատարում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Նախ՝ համեմատենք մեր նախարարների ծառայողական մեքենաների անցած ճանապարհները եւ ծախսած վառելիքի քանակը: 2009թ.-ի օգոստոսի ընթացքում ՀՀ բոլոր նախարարների մեքենաները միասին ծախսել են 5128լ վառելիք եւ անցել են 26978կմ ճանապարհ (այս տվյալը չի ներառում Պաշտպանության եւ Սշակույթի նախարարներինը, քանի որ նրանք չեն տրամադրել ԻՎԿ-ի խնդրած տեղեկությունները, Տարածքային կառավարման նախարարությունն էլ չի տրամադրել նախարարի ծառայողական մեքենայի վազքը, քանի որ չի իրականացվում դրա հաշվառում):

Վառելիքի ծախսի առումով անվիճելի առաջատարը Տարածքային կառավարման նախարար Արմեն Գելորգյանի ծառայողական ավտոմեքենան է, որի շահագործման համար օգոստոսին տրամադրվել է 1075լ բենզին՝ ավելի քան 10 անգամ ավել, քան ամենաքիչ վառելիքը ծախսած Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի ծառայողական ավտոմեքենան, որը ծախսել է 100լ բենզին: Ամենաշատ վառելիք ծախսած մեքենաների երկրորդ հորիզոնականում Քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանի ծառայողական ավտոմեքենան է՝ 450լ վառելիքով:

Երրորդ տեղը բաժանեցին Տրանսպորտի եւ կապի նախարար Գուրգեն Սարգսյանի եւ Արդարադատության նախարար Գեորգ Դանիելյանի մեքենաները՝ 400լ վառելիքով:

2009թ.-ի օգոստոսի ընթացքում ամենաքիչ վառելիքը ծախսել են Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի, Ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանի եւ Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արմեն Գրիգորյանի ծառայողական ավտոմեքենաները, համապատասխանաբար՝ 100, 110 եւ 139լ վառելիքով: Մնացած նախարարների մեքենաների ծախսը 160-ից 360լ է:

Օգոստոսին ամենաշատ ճանապարհ անցած նախարարական մեքենաների առաջատարը Քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանի մեքենան է՝ 2743կմ վազքով: Այս ցուցանիշը մոտ 4 անգամ ավել է, քան ամենաքիչ ճանապարհն անցած Ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանի ծառայողական ավտոմեքենայի ցուցանիշն է՝ 700կմ: Երկրորդ եւ երրորդ տեղերում Արտակարգ իրավիճակների նախարար Միեր Շահգելոյանի եւ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Գելորգ Պետրոսյանի մեքենաներն են, համապատասխանաբար՝ 2700 եւ 2550կմ վազքով: Այս նախարարների ծառայողական մեքենաներին փոքր ինչ զիջում են Արդարադատության նախարար Գելորգ Դանիելյանի մեքենան՝ 2534կմ, եւ Տրանսպորտի եւ կապի նախարար Գուրգեն Սարգսյանի մեքենան՝ 2500կմ:

Ամենաքիչ ճանապարհ անցել է Ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանի ծառայողական ավտոմեքենան: 2009թ.-ի օգոստոսին այս մեքենայի վազքը կազմում է 700կմ: Մնացած նախարարների մեքենաների վազքը 817-ից 2077կմ է:

1 կմ ճանապարհ անցնելու համար ամենաշատ վառելիք ծախսում են Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի եւ Արտակարգ իրավիճակների նախարար Միեր Շահգեղյանի ծառայողական մեքենաները՝ 8.5լ/կմ եւ 8.3լ/կմ ցուցանիշներով: Ամենաքիչ ծախսող մեքենաները Գյուղատնտեսության նախարար Գերասիմ Ալավերդյանի, Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի եւ Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արմեն Գրիգորյանի մեքենաներն են՝ համապատասխանաբար 5.43, 5.55 եւ 5.87լ/կմ ցուցանիշներով: Մնացած նախարարների մեքենաները 1 կմ ճանապարհ անցնելու համար ծախսում են 6.095-ից 7.69լ:

Տեղեկատվություն ստանալու հարցումներ ուղարկվել է 18 նախարարների (այդ թվում ՀՀ փոխվարչապետ, Տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանին): ԻԱԿ հարցումն անպատասխան է թողել միայն Մշակույթի նախարարությունը: Իսկ Պաշտպանության նախարարությունը մերժել է տեղեկատվության տրամադրումը՝ նշելով, որ ՀՀ պաշտպանության նախարարի ծառայողական ավտոմեքենայի շահագործման վերաբերյալ տեղեկատվություն չեն կարող տրամադրել՝ հաշվի առնելով ՀՀ պաշտպանության նախարարի գործառույթները. նշված տեղեկատվությունը պարունակում է ծառայողական գաղտնիք: Մնացած բոլոր դեպքերում ԻԱԿ խնդրած տեղեկությունները տրամադրվել են, եւ դրանց մեջ որեւէ թերի, ոչ լիարժեք պատասխան չի եղել:

Միակ էլեկտրոնային տարբերակով պատասխանը ստացվել է Արտակարգ իրավիճակների նախարարությունից՝ 14.10.2009թ.ին: Մնացած բոլոր պատասխանները ստացվել են

փոստի կամ նախարարության աշխատակցի միջոցով:

Տարբեր է հարցումների պատասխանելու՝ նախարարությունների օպերատիվությունը: Ամենաշուտը ԻԱԿ տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանել է ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը: 07.10.2009թ. թվագրված պատասխան գրությունը Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստացել է հենց նույն օրը: Արտաքին գործերի նախարարությանը հաջորդում են Տարածքային կառավարման, Տրանսպորտի եւ կապի, Ֆինանսների, Քաղաքաշինության, Գյուղատնտեսության, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունները, որոնց պատասխան գրությունները Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստացել է 12.10.2009թ.-ին, Սփյուռքի, ինչպես նաեւ Կրթության եւ գիտության նախարարությունները՝ 13.10.2009թ., Արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ 14.10.2009թ., Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը՝ 15.10.2009թ.:

Ժամկետների առումով ամենավատ ցուցանիշը ցույց է տվել Բնապահպանության նախարարությունը. այս գերատեսչության 28.10.2009թ. թվագրված պատասխան գրությունը ԻԱԿ-ը ստացել է 30.10.2009թ.-ին: Վատ է նաեւ Առողջապահության նախարարության ցուցանիշը՝ 23.10.2009թ. թվագրված հարցումը հասցեատիրոջն է հասել 2009թ.-ի հոկտեմբերի 26-ին:

Ժամկետների առումով պակաս արդյունավետ են եղել նաեւ հետեւյալ նախարարությունները. Պաշտպանության, ինչպես նաեւ Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունները՝ հոկտեմբերի 16-ին, Արդարադատության, ինչպես նաեւ Էկոնոմիկայի նախարարությունները՝ հոկտեմբերի 19-ին:

Ժամկետները վերլուծելիս հաշվի են առնվել այն ամսաթվերը, երբ ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստացել է պատասխան գրությունները: Այսինքն, հնարավոր է որ պատասխան գրությունը պատրաստ է եղել ավե-

լի շուտ, սակայն փոստի կամ նախարարության՝ նամակն ուղարկելու համար պատասխանատու աշխատակցի պատճառով ուշ է հասել Ինֆորմացիայի ազատության կենտրոն: Նշենք, որ բոլոր նախարարությունների պատասխան գրությունները, բացառությամբ Արտաքին գործերի եւ Արտակարգ իրավիճակների նախարարությունների, թվագրված են եղել դրանք ստանալու օրվանից 2-7 օր շուտ ամսաթվով:

Թերի պատասխաններ այս անգամ չեն եղել: Միայն Տարածքային կառավարման նախարարությունը չի տրամադրել նախարարի ծառայողական ավտոմեքենայի վազքի վերաբերյալ տեղեկություն, քանի որ չի իրականացվում նախարարի ավտոմեքենայի վազքի ամսական հաշվառում: Պարզ ասած՝ այդ տեղեկությունը նրանք պարզապես չունենին: Փոխարենը տրամադրել են ոչ միայն փոխվարչապետի ծառայողական մեքենայի օգոստոս ամսվա ընթացքում վառելիքի ծախսը, այլ նաեւ նշել են, որ մեքենայի շահագործման համար շաբաթական 175լ վառելիք (բենզին) է հատկացվում:

Չնայած ոչ լիարժեք պատասխան չի եղել, սակայն բովանդակության առումով լավ առումով աչքի են ընկել մի քանի նախարար-

ություններ: Ջարմանալի է, բայց ամենաուշը պատասխանած Բնապահպանության նախարարությունը պատասխան գրության բովանդակության առումով ամենալավ արդյունքն է ցույց տվել՝ տրամադրելով ոչ միայն պահանջվող տեղեկությունները (նախարարի ծառայողական մեքենայի վազքը եւ ծախսած վառելիքի քանակը օգոստոս ամսվա համար), այլ նաեւ նշելով բնապահպանության նախարարի ծառայողական մեքենայի մակնիշը, պետհամարանիշը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկացրել է, որ նախարարը մինչեւ օգոստոսի 14-ը գտնվել է արձակուրդում, հետեւաբար տրամադրված տեղեկատվությունը վերաբերում է օգոստոսի 15-31-ը ընկած ժամանակահատվածին: Այս առումով դրական են նաեւ Արտակարգ իրավիճակների եւ Քաղաքաշինության նախարարությունների պատասխանները, որոնցում նշված են նախարարների՝ մարզեր կատարած այցելությունների մասին տեղեկություններ: Այսպիսով, նախարարությունները նշել են նախարարների ավտոմեքենաների վազքի եւ վառելիքի ծախսի քանակի բացատրություն: Սփյուռքի նախարարության պատասխան գրությունը նաեւ տեղեկացնում էր, թե ինչ տեսակի վառելիք (բենզին) են օգտագործում՝ պրեմիում:

Մարզպետական եկամուտներ

Գեղորգ Հայրապետյան

2009թ.-ի հոկտեմբերին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացավ ՀՀ բոլոր մարզպետների 2008թ.-ի գույքի եւ եկամուտների հայտարարագրերում ներառված տվյալների մասին տեղեկանքները: Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը 2008թ.-ի ընթացքում զբաղեցրել է Արագածոտնի մարզպետի տեղակալի պաշտոնը, ուստի գույքի եւ եկամուտների հայտարարագիր ներկայացրել է այդ պաշտոնը զբաղեցնելու ժամանակ ստացած եկամուտների վերաբերյալ:

Այսպես. 2008թ.-ին գույքի եւ եկամուտների հայտարարագրեր ներկայացրած 10 մարզպետներից միայն 2-ն են 2008թ.-ի ընթացքում օտարել կամ ձեռք բերել որեւէ գույք, այն էլ՝ միայն անշարժ գույք: Շիրակի մարզպետ Լիդա Նանյանը ձեռք է բերել 1 հողամաս եւ 6 շենք եւ շինություն, օտարել է 2 շենք եւ շինություն: Վայոց Ձորի մարզպետ Վարդգես Մաթեոսյանը ձեռք է բերել 2 շենք եւ շինություն՝ փոխարենը ոչինչ ձեռք չբերելով:

2008թ.-ի ընթացքում գույքով եւ արտարժույթով եկամուտ ունեցել է միայն Շիրակի մարզպետ Լիդա Նանյանը: Արտարժույթով եկամուտը կազմում է 78 ԱՄՆ դոլար, իսկ գույքով եկամուտի արժողությունը 7.620.000 ՀՀ դրամ է:

2008թ.-ին ընթացքում ամենաշատ եկամուտը ստացել է Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը, ում եկամուտը կազմել է 35.070.600 դրամ: Արամ Քոչարյանի եկամուտը մոտ 17 անգամ ավելի է, քան մարզպետներից 2008թ.-ի ընթացքում ամենաքիչ եկամուտն ունեցած Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի ցուցանիշն է 2.074.713 դրամ, եւ 2 անգամ ավելի, քան 2008թ.-ին ամենաշատ եկամուտը ստացած նախարարներից երկրորդի՝ Շիրակի մարզպետ Լիդա Նանյանի ցուցանիշն է

(16.401.983 դրամ՝ ներառյալ գույքով ստացած եկամուտը): Լոռու մարզպետ Արամ Քոչարյանին հաջորդում է Շիրակի մարզպետ Լիդա Նանյանը՝ 16.401.983 դրամ եկամուտով:

2008թ.-ին ամենաքիչ եկամուտն ունեցել է Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը: 2008թ.-ին պաշտոնավարելով որպես Արագածոտնի մարզպետի տեղակալ՝ Սարգիս Սահակյանն ունեցել է 2.074.713 դրամ եկամուտ:

Մնացած բոլոր մարզպետներից յուրաքանչյուրի եկամուտների չափը չի գերազանցում 3 մլն դրամը: ՀՀ բոլոր մարզպետները միասին 2008թ.-ի ընթացքում ունեցել են 71.310.636 դրամ (որից 7.620.000 դրամ գույքով) եւ 78 ԱՄՆ դոլար եկամուտ: Համեմատության համար միայն նշեն, որ բոլոր մարզպետների եկամուտները միասին վերցրած ավելի քան 5 անգամ քիչ են քան 2008թ.-ին նախարարներից ամենաշատ եկամուտը ստացած Առողջապահության նախարար Հարություն Քուչկյանի ստացած եկամուտը (381.607.396 դրամ):

Տեղեկանքները հրապարակված են նաեւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ինտերնետային կայքում՝

<http://www.foi.am/am/content/101/>:

ԻԱԿ-ն ընդդեմ «Հայ ազգային կոնգրես» դաշինքի

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ. ապրիլի 21-ին դիմել էր «Հայ ազգային կոնգրես» դաշինքի ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ խնդրելով տրամադրել.

1. Դաշինքի 2008թ.-ի ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավել արժողությամբ նվիրատվության արժյուրների մասին:

Սակայն տեղեկատվություն ստանալու հարցումը մնացել է անպատասխան: ԻԱԿ-ը 2009թ.-ի հունիսի 26-ին հայց է ներկայացրել դատարան՝ պահանջելով Հայ Ազգային Կոնգրես դաշինքին պարտավորեցնելու հնգօրյա ժամկետում տրամադրել հայցված տեղեկությունները:

Նախնական դատական նիստի ժամանակ ՀԱԿ ներկայացուցիչները չէին ներկայացել դատարան, սակայն գրավոր պատասխան էին ուղարկել, որում մասնավորապես նշել էին, որ ՀԱԿ-ը իրավաբանական անձ, սուբյեկտ, այսինքն՝ տեղեկատվություն տնօրինող չէ, հետևապես իրենք չէին կարող պատասխանել ԻԱԿ-ի՝ տեղեկություն ստանալու հարցմանը:

22.12.2009թ.-ին Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավա-

սության դատարանում հրապարակվեց «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն ընդդեմ «Հայ Ազգային Կոնգրես» դաշինքի դատական գործով դատարանի վճիռը:

Դատարանը որոշեց կարճել գործը՝ առանց ըստ էության քննելու: Գործը կարճելու պատճառը հետեւյալն է. ըստ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ քաղաքացիական գործերով որպես պատասխանող դատարանում կարող են հանդես գալ իրավաբանական կամ ֆիզիկական անձինք: Հետեւաբար, քանի որ Հայ Ազգային Կոնգրեսը կուսակցությունների դաշինք է, իսկ դաշինքը ոչ իրավաբանական անձ է, ոչ էլ՝ ֆիզիկական, ուստի Հայ Ազգային Կոնգրես դաշինքը չի կարող դատարանում հանդես գալ որպես պատասխանող: Այսինքն՝ չնայած այն բանին, որ համաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի՝ դաշինքը որոշակի իրավունքներով եւ պարտականություններով օժտված մարմին է, Հայ ազգային կոնգրեսը պատշաճ պատասխանող չէ:

Ստացվում է՝ անհավասար պայմաններ են ստեղծվում ընտրություններին մասնակցած մյուս կուսակցությունների եւ ՀԱԿ-ի միջեւ:

ԻԱԿ-ն ընդդեմ ՀԱԿ-ի դատական գործի հայցադիմումին եւ դատարանի վճիռն կարող եք ծանոթանալ ԻԱԿ-ի ինտերնետային կայքում՝ <http://www.foi.am/am/rcontent/14/1767/>

ԻԱԿ-ն ընդդեմ «Օրինաց երկիր» կուսակցության

2009թ.-ի հունիսի 26-ին ԻԱԿ-ը հայց էր ներկայացրել դատարան՝ պահանջելով «Օրինաց երկիր» կուսակցությանը պարտավորեցնել հնգօրյա ժամկետում տրամադրել հայցված տեղեկություններ հետեւյալի մասին.

1. 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն, որը կպարունակի «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 3-րդ մասով նախատեսված ողջ տեղեկատվությունը:
2. Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավել արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին:

ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու հարցմամբ կուսակցության ղեկավար Արթուր Բաղդասարյանից խնդրել էր տրամադրել վերոնշյալ տեղեկությունները դեռեւս 2009թ.-ի ապրիլի 21-ին, իսկ պատասխանը ստացվել էր թերի եւ ժամկետների խախտմամբ:

2009թ.-ի սեպտեմբերի 4-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավոր Գ. Կարախանյանի նախագահությամբ, տեղի ունեցավ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցադիմումի քննությունն ընդդեմ «Օրինաց երկիր» կուսակցության:

Դատական նիստի ժամանակ դատավորը՝ որպես ապացույց, պետքեզիստրից պահանջեց ՕԵԿ-ի ֆինանսական հաշվետվության օրինակը, ինչի հետեւանքով էլ դատական նիստը հետաձգվեց:

2009թ.-ի հոկտեմբերի 22-ին Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Գայանե Կարախանյանի նախագահությամբ տեղի ունեցավ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն ընդդեմ «Օրինաց երկիր» կուսակցության դատական գործով վերջին նիստը: Նիստի ժամանակ հրապարակվեց դատարանի վճիռը:

Դատարանը վճռեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ «Օրինաց երկիր» կուսակցության մերժել: Դատարանի վերլուծությամբ՝ եթե Ինֆորմացիայի ազատության կենտրոնը իրեն ուղարկված տեղեկատվությունը համարել է ոչ լիարժեք, ապա կարող էր գրավոր դիմումով հայտնել «Օրինաց երկիր» կուսակցությանը, իսկ եթե վերջինս անվճար չտրամադրեր ճշգրտված տվյալներ, ապա այդ դեպքում նոր խախտված կլիներ ՏԱ մասին ՀՀ օրենքի պահանջը:

Ինչ վերաբերում է նվիրատվություններին, ապա հաշվետվությունների բլանկում նվիրատվությունների աղբյուրների մասին գրառում չլինելու հանգամանքը վկայում է դրանց բացակայության մասին, քանի որ համաձայն ՀՀ արդարադատության նախարարի 31.03.2005թ.-ի թիվ 39-Ն հրամանի՝ հաշվետվության բլանկի համապատասխան սյունում նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է միայն նման աղբյուրի առկայության դեպքում: Սրանից հետեւում է, որ ԻԱԿ-ը պարտավոր էր տեղյակ լինել Արդարադատության նախարարի հրամանի մասին, վերլուծել հաշվետվությունը եւ ինքնուրույն վերհանել իր հարցման երկրորդ հարցի պատասխանը:

Սակայն, հաշվետվությունը վերաբերում էր միայն 2008թ.-ին, իսկ ԻԱԿ-ը խնդրել էր տրամադրել նվիրատվությունների աղբյուրը առանց տարեթիվ նշելու: Այս առումով դատարանը համարել է, որ ԻԱԿ-ի երկրորդ հարցը առաջին հարցի տրամաբանական շարունակությունն է եւ նույնպես վերաբերում է 2008թ.-ին, այնինչ, իրականում դա ինքնուրույն հարց է եւ չի վերաբերում միայն 2008 թվականին: Ամեն դեպքում՝ դատարանը գտել է, որ ԻԱԿ-ին տրամադրվել է լիարժեք եւ սպառիչ տեղեկատվություն:

ԻԱԿ-ն ընդդեմ ՕԵԿ-ի դատական գործի հայցադիմումին կարող էք ծանոթանալ ԻԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքում՝

<http://www.foi.am/am/rcontent/14/1769/>

ԻԱԿ-ն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ. սեպտեմբերի 17-ին տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» (ՏԱԱԿ) ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Պետրոսյանին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Մինչև սույն թվականի օգոստոսի 1-ը ՊՈԱԿ-ի ռեեստրում փորձաքննություն իրականացնող քանի՞ մասնավոր ընկերություն է գրանցված եւ այդ ընկերություններն ու՞մ անունով են գրանցված: Նշեք հավատարմագիր ստացած ընկերությունների անունները:
2. Տրամադրեք նաեւ ՊՈԱԿ-ի աշխատողների 2008 եւ 2009 թվականների հաստիքացուցակներն ու նույն ժամանակահատվածի աշխատողների աշխատավարձերի չափը հաստատող ցուցակը:

ՊՈԱԿ-ից ստացված կես էջանոց պատասխան գրության մեջ նշված է. «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 04.08.2009թ-ի թիվ 99-Ա հրամանի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների կամ նրանց կողմից իրականացվող գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայության միջոցով: Վերոգրյալի հիման վրա առաջարկում են տեղեկատվության ստացման նպատակով Ձեր հարցումն ուղղել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայությանը»:

Այս գրությամբ, փաստորեն, պատասխան չի տրվել ԻԱԿ-ի հարցմանը: 2009թ. սեպտեմբերի 29-ին Ինֆորմացիայի ազատության կենտ-

րոնը ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական հայց է ներկայացրել դատարան:

2010թ.-ի հունվարի 14-ին Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Գայանե Կարախանյանի նախագահությամբ տեղի ունեցավ Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դատական գործի դատաքննությունը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը պնդեց հայցը, իսկ պատասխանող կողմն էլ շարունակեց առարկել ԻԱԿ-ի պահանջների դեմ: «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը դատաքննության ժամանակ պնդեց ՊՈԱԿ-ի մերժման օրինականությունը: Սակայն, ինչպես պարզվեց դատաքննության ժամանակ, վերոնշյալ հրամանի համաձայն ՊՈԱԿ-ին ոչ թե պարտադրվում էր հղում անել ԱԻՆ-ի մամուլի ծառայությանը, այլ տեղեկատվություն տրամադրելու պահանջի դեպքում տեղեկությունների տրամադրումը համաձայնեցնել ԱԻՆ-ի մամուլի ծառայության հետ: Այսինքն, սա ըստ էության տեղեկատվության տրամադրման ներքին կարգ, պայման սահմանող հանձնարարական է:

Դատաքննությունն ավարտվեց, վճիռը կիրառարակվի 2010թ.-ի հունվարի 29-ին:

Դատական գործի հայցադիմումին կարող եք ծանոթանալ ԻԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքում՝

<http://www.foi.am/am/rcontent/14/1825/>

Տեղեկատվության ազատության օրենսդրության բարեփոխումների փաթեթ

Բարեփոխումների փաթեթը մշակվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ, գործող Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի համահեղինակ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի եւ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել են մի շարք քննարկումներ, որոնց մասնակցել են բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, մի շարք գերատեսչությունների տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժինների աշխատակիցներ: Այդ քննարկումների արդյունքում ստացված առաջարկությունների հիման վրա նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ եւ լրամշակումներ: Այժմ փաթեթը ընդգրկված է ԱԺ օրակարգում եւ առաջիկա նիստին ներկայացվելու է քվեարկությամբ: Ստորեւ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններն ու լրացումները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1.

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի սեպտեմբերի 23-ի ՀՕ-11-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասի «ինչպես նաեւ» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում՝

- 1) չորրորդ պարբերության «ինչպես նաեւ» բառերը հանել.
- 2) հինգերորդ մասում «եւ կապի» բառերը փոխարինել «կապի եւ զանգվածային լրատվության» բառերով.
- 3) վեցերորդ պարբերությունը «գրավոր» բառից հետո լրացնել «էլեկտրոնային» բառով.
- 4) յոթերորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.
«հրապարակում՝ տեղեկությունը պաշտոն-

նական տեղեկագրերով, զանգվածային լրատվության միջոցներով, ինտերնետով կամ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը եւ պատշաճ ձեւով մատչելի դարձնելը:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

- «1. Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն են՝
- 1) օրինականությունը.
 - 2) հավաստիությունը.
 - 3) խտրականության բացառումը.
 - 4) տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը.
 - 5) տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը.
 - 6) հրապարակայնությունը:»:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի պաշտոնապես իրեն տրամադրված տեղեկությունն օգտագործելու, փոխանցելու եւ տարածելու ցանկացած օրինական նպատակով եւ միջոցով:».

2) 3-րդ մասում «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերումն բառերը փոխարինել «միայն օրենքով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով» բառերով:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ մասի առաջին պարբերությունում «գործունեությանն առնչվող» բառերը փոխարինել «տնօրինության տակ գտնվող» բառերով.

3) 3-րդ մասի 2-րդ կետը «բյուջեն» բառից հետո լրացնել «եւ դրա կատարման հաշվետվությունները» բառերով.

4) 3-րդ մասը 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 -րդ կետով.

«2.1) գործունեության ծրագրերը եւ դրանց կատարման հաշվետվությունները.»

5) 3-րդ մասի 4-րդ կետից հանել «հաստիքացուցակները, ինչպես նաեւ» բառերը.

6) 3-րդ մասի 9-րդ կետից հանել «բնագավառում գնագոյացման կարգը» բառերը.

7) 3-րդ մասի 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

8) 3-րդ մասի 11-րդ կետում «վիճակագրական եւ ամփոփ տվյալները» բառերը փոխարինել «վիճակագրական ամփոփ տվյալները» բառերով.

րը» բառերով.

9) 3-րդ մասի 12-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

10) 6-րդ մասի «ինչպես նաեւ բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող» բառերը հանել, իսկ մասը «2-րդ» բառից հետո լրացնել «2.1 -րդ» բառով:

Հոդված 7. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) Հայաստանի Հանրապետության արխիվային կամ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանվող այլ հավաքածուի հազվագյուտ եւ հատկապես արժեքավոր փաստաթղթի կամ այլ մշակութային արժեքի բնագիր կամ ոչ բավարար պահպանվածության վիճակ ունեցող փաստաթուղթ է:».

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) դիմողի վերաբերյալ է կամ այլ անձի վերաբերյալ է եւ դիմողն ունի տեղեկությունը հավաքելու, պահպանելու, օգտագործելու կամ տարածելու մասին այդ անձի համաձայնությունը:»:

Հոդված 8. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 9. Տեղեկություն ստանալու կարգը

1. Տեղեկությունը փնտրելու եւ (կամ) ստանալու նպատակով տեղեկատվություն տնօրինողին կարող են ներկայացվել բանավոր, գրավոր եւ էլեկտրոնային հարցումներ:

Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:

2. Բանավոր հարցումը ներկայացվում է տեղեկատվություն տնօրինողի ղեկավար պաշտոնատար անձին կամ տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձին՝ նրա պաշտոնական պարտա-

կանությունների կատարման ժամանակ:

Գրավոր հարցումը ներկայացվում կամ փոստով ուղարկվում է տեղեկատվություն տնօրինողի գտնվելու վայրի հասցեով:

Էլեկտրոնային հարցումն ուղարկվում է տեղեկատվություն տնօրինողի ղեկավար պաշտոնատար անձի կամ տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձի ծառայողական էլեկտրոնային փոստի հասցեով:

Գրավոր եւ էլեկտրոնային հարցումները եւ դրանց պատասխանները գրանցվում են դիմումների գործավարության համար օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը:

4. Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում:

Բանավոր հարցմամբ տեղեկությունը տրվում է, եթե՝

1) տեղեկությունը վերաբերում է տեղեկատվություն տնօրինողի հասցեին, ծառայողական հեռախոսահամարին, էլեկտրոնային փոստի հասցեին, համապատասխան բնագավառի համար պատասխանատու անձի տվյալներին.

2) տեղեկությունը վերաբերում է տեղեկատվություն տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայությանը.

3) տեղեկությամբ պարզաբանվում է տեղեկատվություն տնօրինողի կողմից քաղաքացիների ընդունելության կարգն ու պայմանները:

5. Գրավոր կամ էլեկտրոնային հարցումը պետք է պարունակի՝

1) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը.

2) դիմողի հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը) կամ այն հասցեն (այդ թվում՝ էլեկտրոնային), որով դիմողը պահանջում է ստանալ պատասխանը.

3) հարցումը ներկայացնելու ամսաթիվը.

4) պահանջվող տեղեկության մոտավոր նկարագրությունը կամ գրանցման տվյալները.

5) գրավոր հարցման դեպքում՝ հարցմամբ դիմողի ստորագրությունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը:

6) նյութական կրիչի տեսակը, որով դիմողը նախընտրում է ստանալ տեղեկությունը.

6. Գրավոր կամ էլեկտրոնային հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

1) եթե հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա կրկնօրինակը (պատճենը) դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

2) եթե հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

3) եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը.

4) եթե հարցման մեջ նշված տեղեկությունը

տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել վճարում, ապա տեղեկությունը դիմողին է տրվում վճարման անդորրագիրը ներկայացվելուց հետո՝ 3-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով վճարման չափը եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

7. Գրավոր եւ էլեկտրոնային հարցման պատասխանները տրվում են հարցման մեջ նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցմանը՝ սույն օրենքով սահմանված ժամկետում պատասխանելու համար կամ եթե անհնար է պահանջվող տեղեկության նյութական կրիչից կրկնօրինակում (պատճենահանում) կատարել հարցման մեջ նշված նյութական կրիչին, ապա գրավոր կամ էլեկտրոնային հարցման պատասխանը տրվում է տեղեկություն տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:

8. Գրավոր պատասխանը դիմողին է տրվում տեղեկատվություն տնօրինողի ձեւաթղթով՝ առձեռն կամ ուղարկվում է փոստով, իսկ էլեկտրոնային պատասխանը՝ ուղարկվում է տեղեկատվություն տնօրինողի էլեկտրոնային հասցեից՝ էլեկտրոնային փոստով, որը պարունակում է՝

- 1) տեղեկատվության տնօրինողի անվանումը.
- 2) հարցմանը պատասխանող անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, ծառայողական հեռախոսահամարը եւ էլեկտրոնային փոստի հասցեն.
- 3) պատասխանի ելքի ամսաթիվը եւ համարը.
- 4) հարցման մուտքի ամսաթիվը եւ համարը.
- 5) կցվող նյութի անվանումը, ամսաթիվը, գրանցման տվյալները, գրավոր պատասխանի դեպքում՝ նաեւ թերթերի քանակը, իսկ էլեկտրոնային պատասխանի դեպքում՝ նաեւ նիշքի (ֆայլի) անվանումը.

6) գրավոր պատասխանի դեպքում՝ հարցմանը պատասխանողի ստորագրությունը:

9. Եթե հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դիմողն իր ցանկությանը կարող է տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը: Այդ դեպքում նրան տեղեկությունը նյութական կրիչով չի տրամադրվում:

10. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր կամ էլեկտրոնային հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

11. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր կամ էլեկտրոնային հարցման պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

12. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում տարանջատման ենթակա մնացած մասի վերաբերյալ:

13. Գրավոր կամ էլեկտրոնային հարցմանը պատասխան չի տրվում, եթե՝

1) դա չի պարունակում սույն հոդվածի 5-րդ մասի 1-ից 5-րդ կետերում նշված բոլոր տվյալները .

- 2) սույն հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետով նախատեսված կարգով տեղեկացվելուց հետո՝ 10 օրվա ընթացքում տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չի վճարվում.
- 3) պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությամբ վերաբերող տվյալները կեղծ են.
- 4) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ գրավոր դիմումն է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

14.Ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի, հանգստյան օրերը հանվում են սույն օրենքով սահմանված ժամկետների հաշվարկից:ե:

Հոդված 9. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.Պետական մարմինների եւ պետական հիմնարկների կողմից տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) տրամադրելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների եւ համայնքային հիմնարկների կողմից տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) տրամադրելու համար գանձվում է տեղական տուրք «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) տրամադրելու համար կարող են գանձել վճարներ, որոնց չափերը չեն կարող լինել ավելի, քան համարժեք տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) ստանալու համար սահմանված պետական կամ տեղական տուրքի չափը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

նակը (պատճենը) ստանալու համար սահմանված պետական կամ տեղական տուրքի չափը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Եթե պահանջվող տեղեկությունը Հայաստանի Հանրապետության արխիվային կամ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանվող այլ հավաքածուի հազվագյուտ եւ հատկապես արժեքավոր փաստաթղթի կամ այլ մշակութային արժեքի վերաբերյալ է, ապա տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) տրամադրելու համար կարող են օրենսդրությամբ սահմանված կարգով գանձվել վճարներ, որոնք գերազանցում են համարժեք տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) ստանալու համար սահմանված պետական կամ տեղական տուրքի չափը:».

2) 2-րդ մասում «Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետևյալ դեպքերում» բառերը փոխարինել «Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ կողմից տեղեկությունների տրամադրման համար տուրք կամ այլ վճար չի գանձվում հետևյալ դեպքերում» բառերով.

3) 2-րդ մասի 4-րդ կետը «գրավոր» բառից հետո լրացնել «կամ էլեկտրոնային» բառերով.

4) 2-րդ մասը 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1 -րդ եւ 4.2 -րդ կետերով.

«4.1) երբ տեղեկությունը վերաբերում է տվյալ դիմումատուի, ինչպես նաեւ դիմումատու ֆիզիկական անձի անձնական, ընտանեկան կամ նրա խնամարկյալի, հոգաբարձության տակ գտնվողի իրավունքներին, ազատություններին, պարտականություն-

ներին, իրավունքների սահմանափակումներին կամ պատասխանատվությանը.

4.2) երբ տեղեկությունը վերաբերում է տվյալ տեղեկատվություն տնօրինողի պաշտոնատար անձանց անուններին, ազգանուններին, կրթությանը, մասնագիտությանը, ծառայողական հեռախոսահամարներին, ծառայողական էլեկտրոնային փոստի եւ ծառայողական այլ հասցեներին.».

5) 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) սույն օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով եւ 9-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի, ինչպես նաեւ տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս.».

Հոդված 10. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 11. Տեղեկության տրամադրումը մերժելու կարգը

1. Տեղեկատվություն տնօրինողի ղեկավար պաշտոնատար անձը կամ տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձը մերժում է բանավոր հարցմամբ տեղեկությունը տրամադրելը, եթե հարցմանը պատասխանելը տեղեկատվություն տնօրինողի իրավասության շրջանակներից դուրս է եւ (կամ) հարցումը չի համապատասխանում սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով սահմանված պահանջներին:

2. Գրավոր կամ էլեկտրոնային հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է մերժվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

3. Գրավոր կամ էլեկտրոնային հարցմամբ պահանջվող տեղեկության կամ դրա մի մասի տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողը հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում այդ մասին գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը՝ օրենքի համապատասխան նորմը, ինչպես նաեւ մերժման բողոքարկման կարգը:»:

Հոդված 11. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ եւ 4-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) տեղեկություն փնտրողին մատչելի ձեւով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը եւ պայմանները, անհրաժեշտության դեպքում տեղեկատվության տրամադրման վերաբերյալ տալիս է պարզաբանում եւ խորհրդատվություն.».

2) 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 -րդ կետով.

«2.1) օժանդակում է գրավոր հարցման ձեւակերպմանը, իսկ հնարավորության դեպքում՝ նաեւ կազմում է գրավոր հարցումը:»:

Հոդված 13. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում «3-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ մասի 1-ից 3-րդ կետերով» բառերով:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Բարեփոխումների հիմնավորում

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 23-ին: Անցած 6 տարիների ընթացքում դրսևորվեցին ինչպես օրենքի կենսունակությունն ու հասարակական անհրաժեշտությունը, այնպես էլ՝ ի հայտ եկան մի շարք բացթողումներ¹, որոնց վերացմանն ուղղված օրենքների նախագծերի ներկայցվող փաթեթը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է՝

- 1) հստակեցնել «հրապարակում» հասկացության սահմանումը՝ հրապարակման միջոցների թվում ընդգրկելով պաշտոնական տեղեկագրերը, ինչպես նաեւ «օրենսդրությամբ սահմանված» բառերը փոխարինելով «օրենսդրությամբ չարգելված» բառերով՝ դրանով ընդլայնելով տեղեկությունը հրապարակելու միջոցների ձեւերը (նախագծի 2-րդ հոդված).
- 2) հստակեցնել տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները՝ դրանք լրացնելով օրինականությունը, հավաստիությունը, խտրականության բացառումը սկզբունքներով եւ օրենքով սահմանված սկզբունքներից հանելով տեղեկությունները գրանցելու, դասակարգելու եւ պահպանելու միասնական կարգի սահմանման մասին սկզբունքը, որի ապահովումը գործնականում անհրազործելի է (նախագծի 3-րդ հոդված).
- 3) վերացնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի հակասությունները² (նախագծի 5-րդ հոդված).
- 4) վերացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվող՝ տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման եւ պահպանման, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգերի վերաբերյալ դրույթները՝ օրենքի կիրառումը նվազագույնս պայմանավորելով այլ իրավական ակտերի ընդունմամբ (նախագծի 4-րդ, 9-րդ եւ այլ հոդվածներ).
- 5) հստակեցնել պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը (նախագծի 6-րդ հոդված).
- 6) տեղեկության տրամադրման մերժման հիմքերը լրացնել նոր հիմքով՝ տեղեկու-

1. Մասնավորապես՝ ելնելով օբյեկտիվ պատճառներից, օրենքի 5-րդ հոդվածով եւ 10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգերը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից այդպես էլ չընդունվեցին՝ խոչընդոտելով օրենքի արդյունավետ կիրառմանը:

2. Համաձայն Սահմանադրության 27-րդ հոդվածի երկրորդ մասի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ ստանալու ազատություն ունի յուրաքանչյուր ոք, այնինչ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով այդ իրավունքը վերապահված է յուրաքանչյուր անձի, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանափակված է օտարերկրյա անձանց տեղեկություններ ստանալու ազատությունը:

թյան տրամադրումը մերժվում է նաեւ, երբ տեղեկությունը Հայաստանի Հանրապետության արխիվային կամ օրենսդրությանը սահմանված կարգով պահպանվող այլ հավաքածուի հազվագյուտ եւ հատկապես արժեքավոր փաստաթղթի կամ այլ մշակութային արժեքի բնագիր կամ ոչ բավարար պահպանվածության վիճակ ունեցող փաստաթուղթ է (նախագծի 7-րդ հոդված)。

7) տեղեկության տրամադրումը չմերժելու հիմքերը լրացնել նոր հիմքով՝ տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա դիմողի վերաբերյալ է կամ այլ անձի վերաբերյալ է եւ դիմողն ունի տեղեկությունը հավաքելու, պահպանելու, օգտագործելու կամ տարածելու մասին այդ անձի համաձայնությունը, որը Սահմանադրության 23-րդ հոդվածի պահանջն է (նախագծի 7-րդ հոդված)。

8) հստակեցնել տեղեկություններ ստանալու կարգը՝ կանոնակարգելով էլեկտրոնային եղանակով տեղեկություններ ստանալը, ինչպես նաեւ սահմանելով տուրքերի եւ այլ վճարների մուծման կարգը՝ դրանով ամբողջացնելով տեղեկությունների ստացման գործընթացը եւ նպաստելով, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգը գործնականում կիրառվի առանց այլ իրավական ակտերի՝ մասնավորապես ՀՀ կառավարության որոշումների եւ տեղեկատվություն տնօրինողի կողմից սահմանվող կարգերի ընդունմամբ (նախագծի 8-րդ հոդված)。

9) սահմանել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների կողմից տե-

ղեկություն տրամադրելու համար տուրքեր եւ այլ վճարներ գանձելու պարտադիր պահանջ (նախագծի 9-րդ հոդված)。

10) սահմանել տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական հիմնարկներից, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններից անվճար ստանալու երկու նոր դեպք՝

ա) երբ տեղեկությունը վերաբերում է տվյալ դիմումատուի, ինչպես նաեւ դիմումատու ֆիզիկական անձի անձնական, ընտանեկան կամ նրա խնամարկյալի, հոգաբարձության տակ գտնվող իրավունքների, ազատությունների, պարտականությունների, իրավունքների սահմանափակումների կամ պատասխանատվությանը。

բ) երբ տեղեկությունը վերաբերում է տվյալ տեղեկատվություն տնօրինողի պաշտոնատար անձանց անուններին, ազգանուններին, կրթությանը, մասնագիտությանը, ծառայողական հեռախոսահամարներին, ծառայողական էլեկտրոնային փոստի եւ ծառայողական այլ հասցեներին (նախագծի 9-րդ հոդված)。

11) հստակեցնել տեղեկության տրամադրումը մերժելու կարգը՝ հնարավորինս նվազեցնելով օրենքով սահմանված նորմերի տարաբնույթ մեկնաբանության հնարավորությունը (նախագծի 10-րդ)։

««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» եւ ««Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով առաջարկվում է ամրագրել 10 էջը³ գերազանցող յուրաքանչյուր պատճենահանված կամ տպագրված էջի, ինչպես նաեւ էլեկտրոնային կրիչով, ձայներիզով եւ տեսա-

3. Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս գանձում չի կատարվում։

երիզով տրամադրվելի տեղեկությունների համար գանձվող պետական (տեղական) տուրքերի չափերը:

«ՅՅ քրեական օրենսգրքում» փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով «ՅՅ քրեական օրենսգրքի» 148-րդ հոդվածում օգտագործված բառերը եւ տերմինները համապատասխանեցվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում օգտագործված բառերին եւ տերմիններին⁴:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածում կատարվող լրացմամբ «ապօրինաբար տեղեկությունը չհրապարակելը» հավասարեցվում է «ապօրինաբար տեղեկությունը չտրամադրելուն», որն ուղղված է մասնավորապես «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում նախատեսված տեղեկությունների հրապարակման ապահովմանը:

4. Տես՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մաս:

ՍԵՎ ՑՈՒՑԱԿ 2009

ԱՅՍ ԱՆՁԻՆՔ ԽԱԽՏԵԼ ԵՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 2009Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

Սերգեյ Չալյան	ՀՀ զինվորական կոմիսար
Հասմիկ Պողոսյան	ՀՀ մշակույթի նախարար
Արամ Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Արամ Քոչարյան	Լոռու մարզպետ
Լիդա Նանյան	Շիրակի մարզպետ
Նվեր Պողոսյան	Գեղարքունիքի մարզպետ
Պարույր Սարգսյան	Ջարթոնքի գյուղապետ
Արմեն Մաթևոսյան	Բջնիի գյուղապետ
Խորեն Ավետիսյան	Ելփինի գյուղապետ
Սամվել Վարդանյան	Փարաքարի գյուղապետ
Կիրակոս Սաղաթեյան	Տալվորիկի գյուղապետ
Գեղամ Ղազարյան	Լենուղու գյուղապետ
Գագիկ Բեգլարյան	Երեւանի քաղաքապետ
Արթուր Բաղդասարյան	«Օրինաց երկիր» կուսակցության նախագահ
Մովսես Շահվերդյան	«Հայաստանի աշխատավորական սոցիալիստական» կուսակցության նախագահ
Լեւոն Տեր-Պետրոսյան	«Հայ ազգային կոնգրես» դաշինքի ղեկավար
Տիգրան Խաչատրյան	Թիվ 2 բուժմիավորում ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Աշոտ Պետրոսյան	«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ռոբերտ Հարությունյան	«Երեւանի կառուցապատման եւ ներդրումալին ծրագրերի գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն

www.foi.am

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԶԿ

Զասցե՝ ԶՅ, ք. Երեւան, Փ. Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ
Զեռ./ֆաքս՝ 560922
Էլ. փոստ՝ foi@foi.am
Ինտ. կայք՝ www.foi.am